**«ՀԵՏԱՔՆՆՈՂ ԼՐԱԳՐՈՂՆԵՐ» հասարակական կազմակերպություն**

Երևան, Փ. Բուզանդի 1/3, 8-րդ հարկ, հեռ: (37410) 580219, 563363, (37494) 40 46 24, ֆաքս: (37410) 581102,
E-mail: info@hetq.am, hetq@hetq.am, URL : www.hetq.am

***10.05.2016թ.***

ՀՀ Սյունիքի մարզպետ
**Սուրիկ Խաչատրյանին**
«Հետք» թերթի լրագրող
**Գրիշա Բալասանյանից**
Հեռ. 093-82-26-80

Հարգելի՛ պարոն ***Խաչատրյան,***

«Հետքը» հոդված է պատրաստում մարզերի առաջնահերթ լուծում պահանջող խնդրիների վերաբերյալ: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 9-րդ և 12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկություններ հետևյալի մասին.

1. Առաջնահերթ լուծում պահանջող խնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար ՀՀ կառավարությունը 2015թ. որքա՞ն գումար է հատկացրել Սյունիքի մարզին:
2. Նշված ծրագրի ու հատկացված գումարի շրջանակում ի՞նչ աշխատանքներ են կատարվել, ո՞ր համայնքներում (նշել համայնքը, որտեղ կատարվել են աշխատանքները, գումարի չափը և կապալառու կազմակերպության անվանումը):
3. Ի՞նչ եղանակով է ընտրվել կապալառու կազմակերպությունը:
4. 2015թ. նախատեսված ծրագրերն ավարտվե՞լ են:

Կանխավ շնորհակալություն

*Դիմող՝ Գրիշա Բալասանյան*

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅԱՆ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
ՄՏԻՑ № 3637
«11» 05 2016թ.

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

3301 ք.Կապան, Գ.Նժդեհի 1, հեռ. Ֆաքս (010) 287830, (0285) 52443, էլ-հասցե՝ syunik@mtaes.am

13 մայիսի 2016թ. № 03/16/2083

Ձեր 10 մայիսի 2016 №_____

<<Հետք>> թերթի լրագրող

Գրիշա Բալասանյանին

Հարգելի պարոն Բալասանյան

Ի պատասխան ՀՀ Սյունիքի մարզպետին ուղղված Ձեր գրության ներկայացվում է հետևյալ տեղեկատվությունը.

1. ՀՀ Սյունիքի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ իրականացվելիք աշխատանքների համար Սյունիքի մարզին հատկացված գումարը, նախատեսված աշխատանքները, իրականացման վայրը, մրցույթների կազմակերպման ընթացակարգը սահմանված է ՀՀ կառավարության 02.07.2015թ N766-Ն, 22.10.2015թ. N1249-Ն, 19.11.2015թ. N1346-Ն որոշումներով: Նշյալ որոշումները հրապարակված և հասանելի են www.arlis.am կայքում:
2. Ներկայացվում է ՀՀ Սյունիքի մարզի առաջնահերթ լուծում պահանջող հիմնախնդիրների լուծման ուղղությամբ կատարված աշխատանքների կապալառու կազմակերպությունների ցանկը

| N/N | Ծրագրի անվանումը | Կապալառու կազմակերպության անվանումը |
|---|---|---|
| *1* | *2* | *3* |
| 1 | Սիսիան համայնքի Գայի 4, 10, 14, Սիսական 46ա, 9, 11, 13, 15, 19, Աղոնցի 3, Խանջյան 1ա և 3ա բազմաբնակարան շենքերի բակերի բարեկարգում և ասֆալտապատում | <Սիսիանի ԲՈՒԱՏ> ՍՊԸ |
| 2 | «Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի շենքի հիմնանորոգում | Սիսիանի (Նոր Բակ) <Նորոգշին> ԲԲԸ |

| | | |
|---|---|---|
| 3 | Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգում | «Վերելակ» ԱԿ |
| 4 | Կապան համայնքի բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում ( Մ. Ստեփանյան 42, Լեռնագործների 7, Շինարարների 11, Ռ. Մինասյան 20բ, Հ. Ավետիսյան 4, Ռ. Մինասյան 19 Ա ) | Կապանի «Նորոգշին» ՍՊԸ |
| 5 | Գորիս համայնքի Վանքի տափ թաղամասի բակերի բարեկարգում և ասֆալտապատում | «Ոսմար» ՍՊԸ |
| 6 | Գորիս համայնքի Վ. Մամիկոնյան թաղամասի բարեկարգում և ասֆալտապատում | «Ոսմար» ՍՊԸ |
| 7 | Կապան քաղաքի Ա. Խաչատրյանի անվան թիվ 1 երաժշտական դպրոցի նորոգում | Կապանի «Նորոգշին» ՍՊԸ |
| 8 | Վերին Խոտանան համայնքի դպրոցի տանիքի վերանորոգում | Կապանի «Նորոգշին» ՍՊԸ |
| 9 | Գորիսի քաղաքային համայնքում Վ. Մամիկոնյան թաղամասի վերանորոգվող ճանապարհահատվածի երթևեկելի մասը վերջնական բարեկարգ տեսքի բերելու և հետագայում սելավաջրերի հոսքերից բարեկարգված հատվածները պաշտպանելու աշխատանքներ | «Ոսմար» ՍՊԸ |

3. 2015թ. համար նախատեսված ծրագրերը կատարված են:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Գ. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

Կատարող՝ Է. Մարտիրոսյան

Հեռ. (0285)52130

Էլ-հասցե՝ syuniq.tsragrer@mta.gov.am